

1702 Ապրիլին Մօթըբէյ կը հանդիպի Անկիւրիա (Էնկիւրի) :

«Հայերը,— կը գրէ ան,— որոնք յոյներէն աւելի լաւ առեւտուր ունին Անկիւրիոյ մէջ, ունին հինգ կամ վեց եկեղեցի. ասոնք, սահայն, անոնցիներէն (յոյներու) աւելի լաւ չեն, բացի իրենց պատկանած վանքէն, ծանօթ Հայոց Սուրբ Մարիամ անուամբ, քաղաքէն երկու մղոն դուրս: Հոն դացի՝ տեսնելու համար եւ գտայ այդ (հայ) ազգէն երկու վաճառականներ, որոնք Սինոպ երթալու պատրաստ էին: Անոնցմէ մին լինելու Քրանքա կը խօսէր: Քանի մը հարցումներ ըրի իր քաղաքի մասին, որ պատմութեան մէջ այնքա՞ն նշանաւոր եղած է: Ի մէջ այլոց հարցուցի թէ՛ քանի՞ օրէն կարելի է հոն (Սինոպ) հասնիլ, եւ անկէ ալ ծովով Կ. Պոլիս: Ըսաւ, որ չորս կամ հինգ օրէն կարելի է հասնիլ մինչեւ Սինոպ եւ անկէ ալ լաւ հովով Կ. Պոլիս նոյնքան եւս: Աւելցուց, որ ցամաքով կընամ Սինոպէն Պէնտէրաքի երթալ եւ հոն գտնել բազմաթիւ նաւեր, որոնք ամէն օր թիավարութեամբ մէկ եզերքէն միւսը կ'անցնին, երբ հովը հակառակ ըլլայ: Այս տեղեկութիւնը ինձ ցանկութիւն պատճառեց այդ (Սինոպ) քաղաքը տեսնելու, եւ վճռեցի Կ. Պոլիս դառնալ այդ ճամբով: Այս (Անկիւրիոյ) վանքը, որ այս երկրին մէջ տեսածներուս լաւագոյնն է, բնակավայրն է հայ արքեպիսկոպոսի մը: Այս (հայ) ազգին բարեպաշտները յարատեւ պահք կը պահեն եւ կ'ապրին շատ ժուժկալ կերպով: Անոնք պէտք է ճաշեն միայն այն ատեն, երբ շատ անօթի են, գինի քիչ կամ բնաւ պէտք չէ խմեն: Այնպէս որ, իրենց ժուժկալութիւնը յոյն Քալոէրնետուրը

կ'անցնի: Անոնք միւսներուն չափ իրենց վանքերէն ներս մուտքը կ'արգիլեն հաւերու, կովերու, կամ ուրիշ էգ կենդանիներու, ոչ ալ միս, հաւկիթ, կաթ, կամ ձուկ, նոյնիսկ խեցեձուկ կ'ուտեն: Իրենց ճաշանունդը միայն հնտեղէն եւ արմատներ եւայլն են: Հոս եկած էին երկու առեւտրականներ՝ իրենց ճամբորդութենէն առաջ ստանալու համար օրհնութիւնը արքեպիսկոպոսին, որ կաթոլիկացած հայերու մեծ թշնամի էր եւ որ հազորդութենէ կտրած էր բոլոր պատրիարքները, եպիսկոպոսները եւ ուրիշներ, որոնք իրր եկեղեցւոյ զլուխ Պապը կը ճանչնային, բոլոր հաւատադարձներուն հետ, որոնք Թուրքիոյ մէջ կը գտնուին: Իր անունն ալ կը գտնուէր այն յուշագրին տակ, որ Եփրեմ ներկայացուցած էր Դըրան թէ՛ դարձողներուն եւ թէ՛ դարձնողներուն դէմ»:

«Հոն արտադրեցի քանի մը (յունարէն) արձանաղբութիւններ, եւ այս վանքին շրջակայքը տեսայ կարգ մը հնութեանց մնացորդներ... Երկու հայերուն դէպի Սինոպ մտադրած ճամբորդութիւնը զիս ալ գրաւեց անոնց հետ երթալու, այդ վայրը տեսնելու ու ծովով Կ. Պոլիս վերադառնալու: Երբ իրենց խօսեցայ այդ մասին, պատասխանեցին, որ իմ ընկերութեանս համար ուրախ պիտի ըլլան. իսկ անոնցմէ մին աւելցուց թէ՛ դուցէ ինքն ալ ինձ հետ Կ. Պոլիս անցնի, եթէ Սինոպի մէջ կարենայ իր կարգ մը կարեւոր դործերը աւարտել: Անոնց հետ անկիւրիա վերադարձանք: Գացի իմ Աղաս տեսնելու: Անոր յայտնեցի նպատակս, ան ալ խորհուրդ տուաւ, որ փաշայէն Եօլֆէրման մը (ճամբու հրամանագիր, ան-